ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Վ. Ե. ԴԱԼԼԱՔՅԱՆ, Հայաստանի բանվոր դասակարգի պատմությունից (1920—1930-ական թվականներ), *Երևան, ՀՀ ԳԱ հրատարակչություն, 1991, 151 էջ։*

1920—1930-ական թվականների պատմության վերաբերյալ գրվել են բազմաթիվ աշխատություններ։ Սակայն հիմնահարցերի նորովի ու բազմակողմանի մեկնաբանմամբ առանձնահատուկ տեղ է գրավում Վ. Դալլաքյանի մենագրությունը։ Հեղինակը, օգտագործելով հետազոտման ինքնատիպ եղանակներ, հիմնավորապես քննել է տակավին տարակարծության առարկա հարցեր, արժեքավորել ու վերաարժևորել բոլորովին նոր կամ պատշաճ ուշադրության չարժանացած երևույթներ, դեպքեր և դեմքեր, հանգել գիտական խոր և տրամաբանված եզրահանգումների։ Աշխատության կարևորագույն արժանիքներից մեկն այն է, որ Վ. Դալլաքյանը չի գնացել տրորված ճանապարհով, այլ բացել է սեփական արահետը, երևույթների մեջ տեսել անտեսվածը, հանրահայտի մեջ բացահայտել անհայտը, կատարել մեթոդաբանական լուրջ ընդհանրացումներ։ Հեղինակն առաջ է քաշել այդ բարդ ու հակասական ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրման արդիական ելակետային սկզբունքներ, միանգամայն նոր և ուրույն մոտեցումներ։ Անցյալը ոչ թե դատապարտելու կամ մերժելու, այլ հասկանալու ու բացատրելու գիտական սկզբունքը դավանելով, նա թափանցել է պատմության թատերաբեմում գործող հասարակական շերտերի և անհատների գործելակերպի դրդապատճառների ու շարժառիթների խորքերը, օբյեկտիվորեն փաստելով 1920—30-ական թվականների սերնդի գործունեությունը՝ հատկանշական բարդություններով ու նրբերանգներով։

Մենագրության երկու գլուխներում հանգամանորեն քննարկվում են իշխանության ու կառավարման մարմիններում բանվորների ընդգրկման և գործունեության հարցերը։ Անդրադառնանք ուսումնասիրության առանցքը կազմող որոշ դրույթների։ Հեղինակը ցույց է տալիս, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո ստեղծվեց ամբողջատիրական պետության բնույթին ու խնդիրներին համապատասխանեցված կառավարման մի համակարգ, որի միջոցով փորձ արվեց (Ռուսաստանի օրինակով) սակավաթիվ բանվորության վրա հենվելով բնակչության մեծամասնությունը կազմող գյուղացիական լայնաշերտ զանգվածներին տանել դեպի սոցիալիզմ։ Այդ ժամանակաշրջանում գոյություն ունեցող կառավարման մոդելին, Վ. Դալլաքյանի արտահայտությամբ, մասնավորապես բնորոշ էին՝ ա) իշխանության նկատմամբ կոմկուսի մենաշնորհը, բ) համակարգի մյուս օղակների ստորադասությունը կոմկուսի համեմատությամբ, որը ենթադրում էր դրանց կողմից վերևից հրահանգված քաղաքականության անվերապահ կատարում, գ) աշխատավորության ենթակայությունն այդ համակարգին, որտեղ գործելու հնարավորությունը տրվում էր, իսկ սահմաններն ու շրջանակները վերջին հաշվով որոշվում ու թելադրվում էին կուսակցական վերադաս մարմինների կամ կուսակցական վերնախավի ու առանձին անհատների կողմից» (էջ 116)։

Միանգամայն նոր ու փաստարկված են նաև հեղինակի մոտեցումները 20-ական թվականների վերջերին երկրի հասարակական-քաղաքական կյանքում կատարված կտրուկ քայլերի վերաբերյալ։ Այդ շրջանում «դասակարգային թշնամիներին», «սաբոտաժնիկներին» ու «վնասարարներին» քաղաքական կյանքից առավել վճռականորեն հեռացնելու նպատակով անցկացվեցին 1928—1929 թթ. խորհուրդների ընտրությունները և 1929—1931 թթ. պետական ապարատի զտման լայնածավալ կամպանիան։ Վերոհիշյալ միջոցառումները, որոնց ընթացքում օգտագործվեց ու շահարկվեց նաև բանվոր դասակարգի եռանդը, մեծապես նպաստեցին վարչահրամայական համակարգի թափ առնելուն ու Ստալինի անձնական իշխանության ամրապնդմանը։ Մենագրության մեջ բազմիցս արտահայտվում է այն միտքը, որ այդ տարիներին բանվոր դասակարգը փաստորեն հեռացված էր քաղաքական կյանքից և գործող կառավարման համակարգի բնույթին համապատասխան նրան վերապահված էր «հնազանդ պտուտակի» դեր։

Աշխատությունն առավել անթերի տեսնելու նպատակով կցանկանայինք հայտնել որոշ նկատառումներ։ Նպաստավոր կլիներ, եթե ցույց տրվեին բանվորների և առհասարակ աշխատավորների քաղաքական ակտիվացման համար հեղափոխությունից հետո անցման վաղ փուլում կիրառված միջոցառումների առավելությունները և բացահայտվեին կեղծ ու հակադեմոկրատական ուղղծի աստիճանական խորացման պատճառները՝ հատկապես այսօրվա շրջադարձային դեպքերի տեսանկյունից։ Ի՞նչն է ընդհանուրը ներկայի հետ և ո՞րն է տարբերը։ Ի՞նչ է ուսուցանում պատմության դասը։ Ճիշտ է, աշխատության մեջ ոչ ուղղակի այս հարցերը կան, ոչ էլ դրանց բառաքի պատասխանները, բայց շարադրանքի տրամաբանությունն օգնում է նաև այդ հարցերում կողմնորոշվելուն։

Վ. Դալլաքյանի աշխատությունը ներդրում է ընդհանրապես 1920—1930-ական թվականների պատմության հետազոտման ասպարեզում։

Հ. Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր